

**ՏԱՐՈՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՑԱՆ ԲՆԱԿԱՎԱՑՐԵՐԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Դ. Գ. ԿԵՐՏՄԵՆՋՅԱՆ

Միջնադարյան քաղաքաշինությունը յուրահատուկ է ավատատիրական կարգերին: Նրա հատակագծային կառուցվածքը, ժամանակաշրջանի տարբեր երկրներում ունենալով հանդերձ միևնույն կազմն ու գոտևորումը, երևան է բերում նաև տվյալ տարածքի պատմությունը և ժառանգորդությունը պայմանավորված տեղական առանձնահատկություններ:

4-րդ դարից սկսյալ պատմական Հայաստանի բաժանվածության հետևանքով նրա առանձին նահանգները զարգանում են տարբեր պատմական պայմաններում: Այդ պատճառով առանձին տարածքների բնակավայրերն ունենում են իրարից տարբերվող հատակագծային բովանդակություն, որը դասակարգելի է ըստ ներքոհիշյալների:

ա) պատմության որոշ ժամանակահատվածում գոյատևած միաշրջան քաղաքներ, ինչպես՝ Երվանդաշատը, Երվանդակերտը, Արմավիրը, Արտաշատը, Դվինը, Վաղարշապատը, Արշակավանը, Անին, Զուղան, Կապանը, Շաղատը, Լոռի բերդը, Արծնը, Զարհավանք, Զարիշատը, Աշտիշատը և այլն:

բ) պատմության ընթացքում ընդհատումներով գոյություն ունեցած քաղաքներ, ինչպես՝ Բերկրին, Երևանը, էջմիածինը, Բազարանը, Բաբերդը, Կարինը, Խարբերդը, Նփրկերտը, Անի Կամախը և այլն: Այս խմբի կազմում կարելի է ընդգրկել նաև Կիլիկյան Հայաստանի քաղաքների մեծամասնությունը:

գ) պատմության ընթացքում շարունակաբար հանդես եկած քաղաքներ, ինչպես՝ Երզնկան, Նախիջևանը, Հաղամակերտը, Արտամետը, Վանը, Ոստանը, Արծկեն, Խլաթը, Արճեշը, Մուշը, Բաղեշը և այլն¹:

Տարոն-Վասպուրականի քաղաքները գերակշռությամբ պատկանում են վերջին խմբին: Բացահայտելու համար նրանց քաղաքաշինական առանձնահատկությունները, ստորև, ընդհանուր գծերով, բնորոշվում են տարածքի և նրա բնակավայրերի ուսումնասիրությունից եզրահանգող հիմնական դրույթները:

1. Տարոն-Վասպուրականում բնակավայրերի առաջացման պատմությունը հասնում է մինչև երկրազնդի երկրաբանական պարբերացման շորթորդական՝ Կայնեգոյան փուլի սկիզբները: Այդ համապատասխանում է քաղաքակրթության ամենավաղ ժամանակներին²:

Վերջին տասնամյակներում կատարված պեղումների համաձայն, քարեդարյան և բրոնզեդարյան ժամանակաշրջանների բնակավայրերի բազմաթիվ

¹ Նշված քաղաքների մասին տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1968:

² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև ՀԺՊ), հտ. 1, Եր., 1971, էջ 9—68, հմտ. Ch. Burney & D. M. Lang, The people of the hills, London, 1971, pp. 1—42.

մնացորդներ կան Տարոն-Վասպուրականի համարյա բոլոր մասերում³։ Դրանք հիմնականում կիլիկյան պարիսպներով բերդչեններ են, որոնց զարգացած օրինակները, աշտարակային համակարգ և գաղտնուղի ունենալով հանդերձ, դեռևս հարմարեցվել էին տոհմական բնակեցման համար։ Այդ բնակավայրերի լավագույն պահպանված նմուշներից են Կորձայքի և Պարսկահայքի սահմանային գոտիներում գտնվող Հաֆթվանն ու Յանըք-թեփեն⁴։

Ուշ բրոնզեդարյան բնակավայրերը արդեն քաղաքատիպ էին։ Տարոն-Վասպուրականում և հարևան տարածքներում արշավախմբերի պեղումներով բացվել են կանոնավորության մոտեցող հատակագծային լուծումով ամբողջական բնակավայրեր (Քյուլ թեփե, Բաբադերվիշ, Սոմու թեփե, Թոյրա թեփե, Չաթալ Հյուք, Բեյչեսուլթան, Հաջիլար, Ջանհասան, Սուլթան թեփե, Ջուլֆուրուլար, Սինտ, Կուբիք, Շերեֆհանե, Ալիքելե, Փուլուր, Միլբար, Բադնոց և այլն)⁵։ Նշվածները ամրացված, երկմաս (ամրոց և բերդաքաղաք ունեցող) բնակավայրեր են, որոնք իրենց ժամանակակից զուգահեռներով (Կախուն, Ախեթաթոն, Հին Բաբելոն, Սամալ և այլն) ավելի մոտ են փոքրասիական Սամալ քաղաքի օրինակին⁶։

Տարոն-Վասպուրականի քաղաքաշինությունը իր հիմնական ձևակերպումն է ստանում ուրատական ժամանակաշրջանում։ «Մ. թ. ա. 9-րդ դարի վերջին և 8-րդ դարի առաջին քառորդում մեկը մյուսի ետևից հանդես եկան ուրարտական նորանոր քաղաքներ։ Այս շրջանից սկսած ուրարտական սեպագիր արձանագրությունները բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում հարյուրավոր բնակավայրերի կառուցման մասին, որոնք բոլորն էլ քաղաքներ են անվանվում։ Սակայն հնագիտական պեղումներով պարզվել է, որ քաղաք կոչվածներից շատերը պարզապես ուղղմական նպատակներով կառուցված բերդչեններ էին և իսկական իմաստով քաղաքներ չդարձան։ Սրանց թիվն իրոք

³ Պեղումների մասին տե՛ս W. Lamb, The culture of north-east Anstolia and its neighbours, Anatolian Studies (այսուհետև՝ AS), vol. IV, 1954, Sh. Burney, Northern Anatolia before classical times, (AS), vol. VI, 1956, J. Melaart, Anatolian chronology in the early & middle bronze ages, (AS), vol. VII, 1957, Sh. Burney, Eastern Anatolia in the chalcolithic and early bronze ages, (AS), vol. VIII, 1958, R. Duryan, The ancient cities of Western Anatolia, (AS), vol. XI, 1961, J. Melaart, Early cultures of south Anatolian plateau, (AS), vol. XIII, 1963, D. Easton, Towards a chronology for the Anatolian early bronze age, (AS), vol. XXVI, 1976, etc.

⁴ Ruth Amiran, Yanek tere, Shengavit & the Khibet kerak ware, (AS), vol. XV, 1965. Ch. Burney, Yanik tepe excavations, Iraq, vol. XXXV, pp. 55—57, Նոսրի Excavations at Haftvan tepe 1968—1969, Iran, vol. III, pp. 157—171; 183—185, ընդհանուրի համար տե՛ս Iran, vol. X, 1972.

⁵ Նշվածների պեղումները և այլ տեղեկությունները տե՛ս O. R. Gurney, The Sultan tepe tablets, (AS), vol. s II—X, 1952—1960, Seton Lloyd & Nuri Göktepe, Sultan tepe, (AS), vol. III, 1953, J. Melaart, Preliminary report on a survey of pre classical remains in southern Turkey, (AS), IV, 1954, Seton Lloyd, Beycesultan excavations, preliminary reports, (AS), vol. s V—VII, 1955—1957, J. Melaart, Excavations at Hacilar, (AS), vol. VII—XI, 1957—1961, D. H. Franch, Excavations at Can Hasan, (AS), vol. s XII—XVIII, 1962—1968, J. Melaart, Excav. s at Catalhuyuk, (AS), vol. s XII—XVII, 1962—1967. հմտ. էմ. Խաճագոյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. 8-րդ հազարամյակում, Եր., 1967, էջ 25—28։

⁶ Т. Ф. Саваренская. История градостроительного искусства. М., 1984, с. 17, 25. 30, 36.

հարյուրավորների էր հասնում, սփռված լինելով Ուրարտուի ամբողջ տարածքով մեկ՝ Մալաթիայից մինչև Թավրիզ: Բավական է նշել, որ միայն Վանա լճի շրջապատում և Մշո սալտում 50—60 այդպիսի քաղաքներ կային: Մյուս կողմից, Հին Արևելքի այդ հզոր աշխարհակալ պետությունը չէր կարող գոյություն ունենալ առանց խոշոր քաղաքների՝ երկրի վարչատնտեսական և ռազմական իսկական կենտրոնների»⁷:

Ուրարտական քաղաքաշինության պատմությունը բաժանելի է հիմնական երկու փուլերի՝ մինչև Մենուան (մ. թ. ա. 13—9-րդ դարերը) և Մենուայից հետո (մ. թ. ա. 8—6-րդ դարերը): Առաջին փուլի քաղաքները դեռևս հորինվածքային կազմավորման ընթացքում էին: Նրանք բովանդակում էին կենտրոնական բարձր դիրքով ամրոց և իրենց լանջերին տերրասաձև դասավորությամբ բնակելի թաղամասեր (Մուշ, Բաղեշ, Խլաթ, Հաղամակերտ, Զվստան, Ստորին Անզաֆ և այլն)⁸: Երկրորդ փուլի քաղաքների հորինվածքները, սոցիալական, ռազմական և գեղագիտական սկզբունքներից ելնելով, ունեին ամբողջի եզրային տեղաբաշխում (Վան, Ոստան, Մանազկերտ, Արտազ, Նախիջևան, Բերկրի, Ռուսախնիլի և այլն)⁹:

Հակառակ Ասորեստանի կատարած ավերածությունների, ուրարտական կարևորագույն կենտրոններ Վանը, Ոստանը, Մանազկերտը, Արտազը, Նախիջևանը, Բերկրին, Ռուսասը, Մուշը, Բաղեշը, Խլաթը, Հատտաման, Արծաշըքունը դեգրադացված վիճակում շարունակում են գոյատևել նաև անտիկ դարերում: Նրանց կազմում ավելանում են Գողթներ, Զուղան, Զարիշատը, Զարեհավանը, Բակուրակերտը, Ուրփանոսը, Արտամետը¹⁰: Ուրարտական բնակավայրերը հիմնականում տեղաբաշխված էին ձորահովիտներում, նորաստեղծ առևտրական ճանապարհները (հատկապես Արտաշատից Տիգրանակերտ ձրգվող Արթունական պողոտան) պահանջում էին լեռնային կայանքների ստեղծում: Հետևաբար, այս ժամանակներին պետք է վերագրել նույնպես Զառնակիի, Ազնավուրի, Մոկսի, Խիզանի, Սասունի, Օձի, Վիշապի, Զյունկերտի, Աշտիշատի, Լեզքի և մի փոքր հեռու գտնվող Արզնի քաղաքացումը¹¹: Որպես

⁷ ՀԺՊ, հտ. 1, էջ 351:

⁸ Հմմտ. Ch. Burney & G. Lawson, Measured plans of Urartian towns, vol. X, pp. 177—196.

⁹ Նշված քաղաքների մասին տե՛ս T. A. Sinclair, Eastern Turkey an architectural & archaeological survey, vol. 1, London, 1987, pp. 179—311, H. F. Lurch, Armenia, travels & researches, vol. II, London, 1901, pp. 81, 147, 271, 296. A. Gabriel, Voyage archeologique dans la Anatolie d-oriental, Paris, p. 1940, p. 59. **Ս. Էփրիկեան**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան Հայաստանի, հտ. 1, Վեներիկ, 1903, էջ 291—293, 299—300, 361—367, 401 և այլն, Ch. Burney & G. Lawson, նշվ. աշխ., (AS), vol. X, 1960:

¹⁰ Նշված բնակավայրերի մասին տե՛ս Ա. Այվազյան, Ագուլիս, Երևան, 1984, С. Тер-Аветисян. Город Джуга, Тбилиси, 1937, **Փեղաձ Տեր-Պալուստեան**, Ջուղայի պեղումները, «Մշակ», 1904, № 2, Ղ. Ալիշան, Սիսական, Վեներիկ, 1893, էջ 314—337, 400—428, **Թ. Խ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 185, 186, 171, 242, Մ. Միրախորեան, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս արևելեան Տաճկաստան, հտ. Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 59—65, 58—94, **Ս. Արծրունի**, Պատմություն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 52—54:

¹¹ Տե՛ս T. A. Sinclair, An architecteural..., p. 236, 281—286,

Ղ. Ինճիճեան, Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի, հտ. Ա, Վեներիկ, 1806, էջ 180—202, Ե. Լալաեան, Բուլանըխ կամ Հարք գավառ. 11գգ. հանդ., 1901, էջ 9—43 և այլն:

այդպիսին, նշված բնակավայրերի քաղաքաշինական համակարգերի հիմքում ընկած էին անտիկ հատակագծման լուծումները¹²:

Շապուհ Բ-ի կողմից 4-րդ դարում կատարված ավերածությունների հետևանքով վերևում հիշատակված անտիկ բնակավայրերը ամբողջովին շեն ավերվում, այլ դեգրեդացվում են: Այդ է պատճառը, որ որոշ ավաններ շուտափույթ քաղաքանում են հենց վաղ միջնադարի սկզբներին (Խլաթ, Մուշ, Բաղեշ, Վան, Արծկե, Արճեշ և այլն)¹³:

Զարգացած միջնադարյան Հայաստանի քաղաքական խաղաղ պայմանների հետևանքով երկրի վաղ միջնադարում դեգրադացված բնակավայրերը վերածաղկում են՝ «բազմամարդությամբ և ընչեղությամբ»¹⁴: Քաղաքների ներքին կյանքի բարգավաճումը ստեղծում է մշակույթի բոլոր բնագավառների վերելք, այդ թվում նաև քաղաքաշինության: Նշված զարգացումը որոշ հեղինակների կողմից գնահատվում է որպես «վերածննդի» կամ «մինչ վերածննդի» ժամանակաշրջան¹⁵:

Փաստորեն, զարգացած միջնադարում տեղի ունեցած «Ագարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ»¹⁶ օրինաչափությամբ Տարոն-Վասպուրականի բնակավայրերը ևս վերագտնում են իրենց նախկին բարգավաճ վիճակը: Արծրունյաց թագավորության հովանավորության ներքո խնդրո առարկա տարածքի քաղաքներից Ոստանը աննախընթաց կարևորություն է ձեռք բերում: Եթե ուրարտական ժամանակաշրջանում Վասպուրականի մայրաքաղաք Վանը վարչակրոնական պահանջներով ընդարձակվել է հարևան Ռուսախնիլիով¹⁷, միջնադարում այդ երևույթը ստեղծագործաբար կրկնվում է տարածքի «Ոստան Աղթամար» հորինվածքային փոխառնչությունում¹⁸: Ժամանակաշրջանի քաղաքների կառուցապատման պատմության կապակցությամբ առանձնահատուկ է նաև այն, որ մինչև Արծրունյաց նվաճումները և նրանցից հետո առանձին քաղաքներ իրենց շրջաններով (Խլաթ, Բաղեշ, Մուկա, Խիզան, Մանագկերտ, Արճեշ, Արծկե, Բերկրի, Սասուն, Մուշ, Վան, Մարանդ, Նախիջևան և այլն) պատկանել են տարբեր ավատատիրական ընտանիքների: Վերջիններս, կախվածություն մեջ լինելով հանդերձ նահանգների իշխաններից, իրենց նրստավայրը կառուցապատում էին մայրաքաղաքատիպ: Սա է պատմական այն խորքը, որ ողջ զարգացած միջնադարում մեծ զարկ տվեց Տարոն-Վասպուրականի քաղաքային կյանքի բուռն առաջընթացին և, ըստ այնմ, մշակույթի տարբեր բնագավառների (ճարտարապետություն, քաղաքաշինություն, մատենագրություն, գրականություն, մանրանկարչություն, փիլիսոփայություն և այլն) ծաղկուն և յուրահատուկ վերելքին: Սկզբում արաբաբյուզանդական, այ-

¹² Հմմտ. **И. А. Орбели.** Фолклор и быт Мокса, М.-Л., 1982, с. 21—30.

J. G. Taylor. Journal of Royal Geographical society. Ix, 1863, pp. 36—40, comp. **H. Kiepert,** Über die lage der Armenischen Hauptstadt Tigranocerta Berlin, 1873, karten, "Ruinen von Nach Arzen Consul Taylor".

¹³ Հմմտ. **Մ. Յովհաննեսյան,** Հայաստանի բերդերը, Վեներտիկ, 1970, էջ 161—165, 171—175, 205—217, 269—278, **Բ. Առաքելյան,** Քաղաքները և արձեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, հտ. 1, Եր., 1958, էջ 92—93, 100—105:

¹⁴ **Հ. Մանանդյան,** Քաղաքները Հայաստանում 9—11-րդ դարերում, Եր., 1940, էջ 5—8, հմմտ. **Յովհաննու Կաթողիկոսի Գրասխանակերտոցոյ Պատմութիւն Հայոց,** Թիֆլիս, 1912, էջ 198—199:

¹⁵ **Վ. Չալոյան,** Հայկական ռենեսանս, Եր., 1964:

¹⁶ **Ստեփաննոս Տարոնացոյ Ասողկան «Պատմութիւն տիեզերական»,** Ս. Պետերբ., 1885, III, գլ. Գ, էջ 161:

¹⁷ **T. A. Sinclair,** An architectural &..., pp. 188—189, 313. E. Akurgal, Urartäische und Altiranische kunstzentren, Ankara, 1968, s. 7.

¹⁸ Հմմտ. **Թ. Արծրունի,** Աշխ., էջ 290—296:

նուհետև բյուզանդա-սելջուկյան մրցակցութեան հետեանքով, Տարոն-Վասպուրականի տարածքից միջնադարյան Տարոնի հյուսիսային սահմանագծային մասերում միայն նշանակալի քաղաքներ չեն ստեղծվում: Նշված տարածքում զարգանում են իրարամերձ փոքր քաղաքներ և բնակավայրեր:

14—15-րդ դարերում հայկական պետականութեան վերջնական քայքայման հետեանքով բարձրանում է եկեղեցու դերը, և օրինաչափորեն (մասնավորապես Տարոնի հյուսիսային տարածքներում) ստեղծվում են համաերկրային նշանակութեան ամրոց և վանք համադրումից կազմված ռեզիտնալ նոր հորինվածքներ: Այդպիսիք են Մշո Առաքելոցն ու Արաքս կամ Արքաբիրոջը, ս. Կարապետը և Մեծամորը, Հարթ գավառի Հոշկն ու Դաղնավանքը: Նույնպիսի սկզբունքներով կարելի է դիտել նաև Արտազը և ս. Թադեն, Ջուղան և ս. Ստեփաննոսը, Աստապատը և Կարմիր վանքը, Կեսրիկը և ս. Գևորգը, Սըղզան և ս. Աստվածածինը և այլն¹⁵:

2. Տարոն-Վասպուրականի բնակավայրերի տեղի ընտրություներ կլիմայական և լանդշաֆտային գործոնների կողքին պայմանավորված էր նաև՝

ա) գետերի (Ծփրատի, Տիգրիսի, Արաքսի վտակների), լճերի (Վանա, Արճակի, Նազուկա և այլն) և բարձրադիր ակերի (Հազարակն, Մժնկերտ, Նորդուզ և այլն) ջրային հարստություններով:

բ) զանազան հանքանյութերի և բնական հումքի (Բաղեշի քարահանքերը, Նախիջևանի աղի հանքը և այլն) առկայությամբ:

գ) միջազգային նշանակություն ստացած առևտրական ներքոհիշյալ մայրուղիներով՝

— Հաղամակերտ-Խոշապ-Վան-Բերկրի, Արտազ-Ջուղա-Նախիջևան-Ագուլիս:

— Խոյից՝ Արճակ-Վան-Ոստան-Բաղեշ-Մուշ:

— Կարինից՝ Խնուս-Մանազկերտ-Արծկե-Բերկրի-Վան-Խոշապ-Հաղամակերտ:

— Կարինից՝ Խնուս-Մանազկերտ-Հարթ, Խլաթ-Դատվան-Բաղեշ և այլն¹⁶:

3. Տարոն-Վասպուրականի առանձին տարածքների բնակավայրերի փրջնջավորումը եռաստիճան է: Այն բովանդակում է նահանգային նշանակութեան մայրաքաղաքներ, յուրաքանչյուր մայրաքաղաքի հետ անմիջապես կապված գավառների կենտրոններ և ամեն մի գավառի տարածքում կենտրոնաձիգ դասավորություն ունեցող ավաններ, գյուղեր ու ազարակներ:

Միջնադարում նահանգների և գավառների կենտրոնները իրար հետ առաջացնում են երկու տարածքային օղակներ:

ա) Վանա լճի շուրջ դասավորված քաղաքներով կազմված ներքին օղակ (Վան, Ոստան, Արտամետ, Դատվան, Խլաթ, Արծկե, Արճեշ, Բերկրի),

բ) տարածքի սահմանային գոտիներով դասավորված քաղաքներով կազմված արտաքին օղակ (Արճակ, Արտազ, Ջուղա, Նախիջևան, Ագուլիս, Ապաղա, Մանազկերտ, Խնուս, Հարթ, Չյունկերտ, Մուշ, Սասուն, Բաղեշ, Շատախ, Հաղամակերտ և այլն):

Բնակավայրերով կազմված տարածքային նշված օղակները արդյունք էին համաերկրային պաշտպանական և վարչակրոնական ցանցերի կազմավորման: Դրանք ավելի ընդգծված են դառնում, եթե նրանց կազմում ավելացվում են միջնադարում արդեն բերդերի վերածված ուրարտական քաղաք ամ-

¹⁵ А. Манандян. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ер., 1953, с. 143—153, 200—222.

րոցները (Չվստան, Անզաֆ, Չավուշ, Դելի շայ, Քարահան, Քեֆ կայե, Քեֆիր կայե, Հարման թեփե, Գիրիկ թեփե, Կայալը դերե և այլն)²⁰:

4. Տարոն-Վասպուրականի քաղաքատիպ բնակավայրերը դասակարգելի են ըստ առափնյա և ցամաքամասային հատկազծային հորինվածքների: Առաջին խմբին պատկանում են հիմնականում մեծ քաղաքները, իսկ երկրորդին՝ մեծերի հետ նաև փոքրերը:

ա) Առափնյա քաղաքները հիմնականում Վանա լճի շուրջն են: Դրանք, բացառությամբ Արճեշի, լճի մակարդակի անկայունության պատճառով տեղադրվել են ափից մի քանի կիլոմետր հեռու և նրա հետ կապվել են հատուկ քաղաքամասերով՝ նավահանգիստ-արվարձաններով: Այդպիսիք են Վանի Ավանցը, առափնյա Խլաթը, Ոստանի Սպիտակ վանք թաղամասը, Արտամետի անտառը, Արծկեի նավահանգստի թաղը և այլն: Նավահանգստի հարևանությամբ եղել են նաև բնակավայրը լճի կողմից պաշտպանող ամրոցներ: Ավանցում ամրոց եղել է, թե՛ ոչ, պարզ չէ, սակայն, այնուամենայնիվ, նման ամրություններ մինչև վերջին դարերը գոյատևել են Արծկեում, Խլաթում, Ոստանում՝ հանձին Աղթամարի: Ի միջի այլոց Խլաթի առափնյա ամրոցը օսմանյան ժամանակների հիմնադրություն չէ, այլ՝ եղածի նորովի վերակառուցումը²¹:

բ) Փոքր քաղաքներ՝ Որդուատ, Զուղա, Աստապատ, Զարիշատ, Զառնակի, Ազնավուր, Լեզք, Հարք, Օձ, Վիշապ, Զյունակերտ, Խնուս, Սասուն, Դատվան, Խիզան, Մոկս, Շատախ, Արտամետ, Արճակ և այլն: Սրանք սովորաբար զարգացել են բնականորեն պաշտպանված ձորամիջի տարածքներում, գետի երկու ափերին (մեծ գետերի դեպքում միայն մի ափին՝ ինչպես Զուղան և Բերկրին): Քաղաքները պարսպապատվել են միայն մատչելի մասերում, որտեղ և սովորաբար տեղադրվել են քաղաքադարպասները (Զուղա, Շատախ, Լեզք, Կեսրիկ): 19-րդ դարի դրությամբ թվարկված քաղաքների մեծամասնությունը ունեցել է կորցրած ամրոցներ նշանակությունը: Խնդրո առարկա քաղաքներից անտիկ ժամանակներում կառուցապատվածները կամ վերակառուցապատվածները, ամրոցից անկախ, բնակավայրի տարածքում ունեցել են նաև ամրացված ապարանքներ (Դատվան, Մոկս, Խիզան, Արտամետ, Ապաղա)²²: Կարծիք կա, որ Զառնակին, Ազնավուրը, Մոկսը, Խիզանը կառուցապատվել են որպես ճամբարային քաղաքներ²³:

գ) Ցամաքամասային մեծ քաղաքները սովորաբար զարգացել են մի քանի ձորահովիտների հանդիպման տեղում: Սրանք քաղաքաշինական կազմով էական տարբերություն չունեն միջնադարյան Հայաստանի մյուս քաղաքներից: Սակայն կարևոր է նշել, որ, Տարոն-Վասպուրականը հանդիսանալով հարատևողաբար զարգացած տարածք, խնդրո առարկա քաղաքները բովանդակում են նաև տարբեր ժամանակների կառուցապատման մնացորդներ: Այդ կապակցությամբ դրանցում պարզորոշ արտացոլված են ուրարտական վաղ

²⁰ Տե՛ս E. Akurgal, Գշվ. աշխ., էջ 4—7: Հմմտ.

T. A. Sinclair, *ibid.*, pp. 208—212, 219—220, 261—262, 169—270, 277—278, 282—283, 286—288, C. F. Lehmann Haupt, *Materialien zur Älteren Geschichte Armeniens und Mesopotamien*, Berlin, 1907, *dereseble*, C. F. Lehmann Haupt, *Armenien Einst und Jetzt*, I, 1910, II, 1, 1926, II, 2, 1931, Ch. Burney, (AS), vols VII—X...

²¹ Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ քառարան, հտ. 1, էջ 291—293, հտ. 2, Վեհեստիկ, 1907, էջ 175—176, հմմտ. H. F. Lynch, *Armenia*, II, pp. 21—30, 295—97:

²² Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ քառարան, հտ. 1, էջ 558—559, հտ. 2, էջ 170—173, Մ. Ա. Օրբեան, Գշվ. աշխ., էջ 27, Ք. Արծրունի, Գշվ. աշխ., էջ 52—54 և այլն:

²³ T. A. Sinclair, *An architectural & archaeological survey...* p. 314.

ըրջանի՝ ամրոցը բնակավայրի մեջտեղում և զարգացած շրջանի՝ եզրային տեղադրությամբ ամրոց քաղաքաշինական հորինվածքային տարրերակները:

-5. Տարոն-Վասպուրականի Բաղաբենի հատակագծային բաղկացուցիչ տարրերը. ա) ամրոցը կամ միջնաբերդը տեղադրությամբ անառիկ էր և ուներ ձգված տարածական համաչափություն: Նրա դեպի քաղաք հայեցող մասում բարձրանում էր ավատատերի ապարանքը և բերդի եկեղեցին: Ամրոցի պարսպապատերը ապարանքի հակադիր կողմում միանում էին բերդաքաղաքի երկտակ պարիսպներին և քաղաքը դարձնում մեկ պաշտպանական հաղորդակից համակարգ: Ամրոցի և բերդաքաղաքի պարսպապատերի միացման հանգույցում սովորաբար տեղադրվում էին զինամթերանոցները և այլ պահեստները: Տարոն-Վասպուրականի քաղաքային ամրոցների զբաղեցրած մակերեսները տատանվում են 2—8 հեկտարի միջև (Բաղեշ, Վան)²⁴:

բ) Բերդաքաղաքը տեղանքով որոշ դեպքերում հարթ է (Վան, Մանազկերտ, Բերկրի, Արճեշ) և որոշ դեպքերում թեքադիր (Մուշ, Արծկե, Ագուլիս, Ոստան, Դատվան և այլն): Երկտակ պարսպապատերը միջաշտարակային կես բայլով շեղված են իրարից: Դրանցում եղած պարսպադարպասները տեղադրվել են ըստ առևտրական փողոցների: Քաղաքային պարսպապատերը բազմիցս ավերվել և վերակառուցվել են: Այդ պատճառով նրանց շտարակները հատակագծային և տարածական ձևերով բազմազան են, մինչև անգամ տարբեր մասերում ունեն տարբեր բնույթի շարվածքներ: Տարոն-Վասպուրականի քաղաքների բերդաքաղաքային հատվածների զբաղեցրած մակերեսները տատանվում են 65—100 հեկտարի միջև (Մանազկերտ, Խլաթ)²⁵: Իսկ 19-րդ դարի դրությամբ քաղաքների ընդհանուր տարածությունները (արվարձանների և նոր ընդարձակված մասերի հետ միասին) տատանվում են 200—600 հեկտարի միջև (Վան, Բերկրի)²⁶:

գ) Քաղաքների առևտրահասարակական համալիրները, բացառությամբ Ագուլիսի, Բերկրիի, Մոկսի, ուսումնասիրված բոլոր օրինակներում էլ սկզբնավորվել են բերդատակի փողոցբաժանից: Առևտրական փողոցները օրինաչափորեն զարգացել են քաղաքադարպասների ուղղությամբ և դարպասամերձ՝ դեպի արվարձանները տանող հատվածներում առաջացրել են առևտրական կամ այլ հատուկ անուններով կոչված ոչ կանոնավոր ձևի միջնադարյան հրապարակներ:

Առևտրահասարակական կենտրոնները, ըստ հորինվածքի, փոքր քաղաքներում հանդիպում են երկար առևտրական փողոցների ձևով (Արտամետ, Արտազ, Ագուլիս, Արճակ, Մոկս, Շատախ, Զուղա, Խնուս)²⁷, իսկ մեծ քաղաքներում նրանք ունեն՝

— ուղղահայաց հատույթով եռաթև փողոցներից կազմված (Տ-աձև) հորինվածք (Վան, Ոստան, Խլաթ),

²⁴ Հմմտ. T. A. Sinclair, op. cit. ibid, pp. 290—300. Վան քաղաքի 1916 թ. հանույթը, Վ. Մ. Հարությունյանի արխիվ, հմմտ. H. F. B. Lynch, Armenia, II, front. pp. 147 & 81.

²⁵ H. F. B. Lynch, ibid, front. pp. 271. 286.

²⁶ H. F. B. Lynch, ibid, front pp. 81. 296.

²⁷ Հմմտ. Թ. Արծրունի, Աշխ., էջ 52—54, W. Kleiss, Bericht über zwei Erkundungsfahrten in Nord West Iran, Archaeologische Mitteilungen aus Iran, 2 (1969), s. 68, Հայաստանի ազգագրություն և բանահյուսություն, հտ. 8, Եր., 1978, էջ 10—21, հմմտ. Ս. Էփրիկեան, հտ. 1, էջ 9—17, 185—186, Վասպուրական, Վեցերդ, 1990, Ղ. Ալիշան, Սիսական, էջ 409—414, Ե. Մալիքեան, Հարթ—տե՛ս Ծատախի մասը, Գույնի, Խնուս, Գլխուք, 1984, էջ 26—30:

— հովհարածե հորինվածք (Արծկե, Արճեշ, Նախիչևան, Մանազկերտ, Մուշ, Բաղեշ)²⁸,

դ) Քաղաքների փողոցների ցանցը պայմանավորվել է առևտրահասարակական կենտրոնի հորինվածքով, ըստ այնմ, կենտրոնի գծային հորինվածքի գեպտում ունեցել է զլխավոր փողոցից ճյուղավորվող, իսկ հովհարածե հորինվածքի դեպքում՝ շառավղաշրջանաձև համակարգ: Գլխավոր փողոցները սովորաբար ունեցել են 5—6 մ լայնություն, միջթաղային փողոցները եղել են 3—4 մ, նրբանցքները՝ 1,5—3 մ:

ե) Քաղաքների թաղամասերի անվանացանկերը մեզ հասել են մեծամասամբ վերջին դարերի դրուժյամբ: Սակայն, նրանց տեղագրումը քաղաքի կառուցվածքում միշտ չէ որ հայտնի է: Այդ կապակցությամբ կարևոր է՝

— Քաղաքի թաղամասերի բաժանումը կատարվել է ըստ ծխական եկեղեցիների, ինչպես՝ Առաքելոց եկեղեցիների կամ Զուխտակ վանքի, Միրանավորի, Աստվածածնա (կամ առաջնորդարանի), ս. Հակոբա, Հայնկույսների և այլ թաղամասերը՝ Վանում, ս. Մարինոսը՝ Մուշում, Ամրտողու, Գոմոց, Ավեր, Կարմբակ և այլ թաղերը՝ Բաղեշում, Ժամու կամ Աստվածածնա թաղը՝ Խնուսում, Սիվտուկ վանքի թաղը՝ Ոստանում և այլն:

— Արվարձաններում եղած թաղերից ծայրամասայինները սովորաբար անվանվում էին ըստ գյուղից քաղաք մատակարարվող հումքի կամ նշանակության, ինչպես՝ Քարահանքի (Դաշ) թաղը Բաղեշում և Մուշում, Աղացի թաղը՝ Շատախում, Դաշտի թաղը՝ Մոկսում և Շատախում, Խուպանի թաղը՝ Ագուլիսում և այլն²⁸:






— Առևտրահասարակական կենտրոնի թաղերը ունեցել են անվանումներ ըստ մասնագիտացված շարքերի կամ նշանակության, ինչպես՝ փողոցբաժանը Խնուսում, Զիգրաշեն, Բրուդենց, Քոթան թաղերը՝ Մուշում, Ներկարարների՝ Վանա քաղաքամեջում, իսկ Արարն ու Խաչփողանը՝ Այգեստաններում, պաղավաճառների, կերպասավաճառների և այլ թաղերը՝ Բաղեշում, Շալագործների թաղը՝ Շատախում, Անջրղոց թաղը՝ Մոկսում և այլն:

— Տարոն-Վասպուրականի թաղամասերը քաղաքի կառուցապատման մեջ գոտևորվում էին նաև ըստ արևահայացության՝ Արեգղեմ, Մմակ, և ըստ զբաղեցրած տեղի՝ Վերին, Վարին, Չորի, Բերդի և այլն:

6. Տարոն-Վասպուրականի քաղաքային եկեղեցիները թաղամասերի ծրխական գոտևորման նշանակությունից բացի ունեին նաև տեղագրական՝ գեղատեսիլության սկզբունք: Վերջին հանգամանքը վկայող մատենագրական և փաստագրական բազմաթիվ տվյալներ կան:

Տարոն-Վասպուրականի քաղաքաշինական բաղկացուցիչ տարրերից էին նաև յուրաքանչյուր բնակավայրի հարևանությամբ գոյություն ունեցող նրվիրական վանքային համալիրը և քաղաքային զլխավոր եկեղեցին: Եթե վերջինը միջնադարյան քաղաքաշինության օրինաչափական ճանաչված տարրերից էր, առաջինը տեղական, ժառանգորդական տարր էր, որ անխտրաբար կրկնվում է տարածքի մեծ և փոքր քաղաքների կառուցապատման կազմում: Նրա անմիջական օրինակներն են՝ Աղթամարը «Ոստան-Աղթամար» հորինվածքային փոխառնչությունում, Վանի Վարագը, Արտամետի Կոնկու վանքը, Բերկրիի Տեր Հուսկան վանքը, Արծկեի Սքանչելագործը, Արտագի ս. Թադեն, Աստապատի ս. Վարդան կամ Կարմիր վանքը, Զուղայի ս. Ամենափրկիչը, Ագուլիսի ս. Թովման, Արճակի ս. Աստվածածինը, Հաղամակերտի Հնուդ ս. Խաչը, Խոշապի կամ Հայկաբերդի Բութաց ս. Աստվածածինը, Շատախի Սոզվա-


²⁸ Д. Г. Каргменджян. Торгово-общественные центры средневековых городов Армении.—Диссертация на соискание уч. степ. канд. архитектуры, Л., с. 60—87.



3

Diagram 5 shows a central point (4) connected to several surrounding points (1, 2, 3, 5). This diagram illustrates the relationship between the central point and the surrounding points, which are likely representing different parts of the building or site.

6



1. Дамы, 2. Перемычки, 3. Уплотнитель, 4. Уплотнительный материал, 5. Перемычка, 6. Уплотнительный материал.
 1. Уплотнитель, 2. Перемычка, 3. Уплотнитель, 4. Перемычка, 5. Уплотнитель, 6. Перемычка.
 1. Дамы, 2. Перемычки, 3. Уплотнитель, 4. Уплотнительный материал, 5. Перемычка, 6. Уплотнительный материал.
 1. Дамы, 2. Перемычки, 3. Уплотнитель, 4. Уплотнительный материал, 5. Перемычка, 6. Уплотнительный материал.

1. Дамы, 2. Перемычки, 3. Уплотнитель, 4. Уплотнительный материал, 5. Перемычка, 6. Уплотнительный материал.

նից ս. Խաչը, Մոկսի Մայատիվանքը, Խիզանի ս. Խաչը, Բաղեշի Ամլորդվոկամ այլ քաղաքային վանքերը, Խլաթի Մատնավանքը, Մշո ս. Առաքելոցը, Մանազկերտի Ապահունյաց ս. Դանիկը, Խնուսի Կարմրակն ս. Գևորգը և այլն:

Եզրակազմություն. Տարոն-Վասպուրականի բնակավայրերի քաղաքաշինական համակարգերը, հարազատորեն արտացոլելով միջնադարյան ավատատիրական կարգերը, նման էին ժամանակաշրջանի միջազգային և հայկական զուգահեռներին: Այնուհանդերձ, տարածքը, անցնելով հարատև պատմական զարգացում, կսուցուպատման մեջ ունի տեղական առանձնահատկություններ, որոնք բխում են նահանգների հնագույն ավանդներից: Այդ թվում են՝

— Ուրարտական ավանդներից սերող ամրոցը բնակավայրի կենտրոնում քաղաքաշինական համակարգերը.

— Տարածքի յուրաքանչյուր քաղաքին ընկերակցող նվիրական վանքային համալիրի առկայությունը.

— Անտիկ ավանդներից սերող փոքր քաղաքներում եղած և ամրոցից անկախ կառուցված ավագանու ամրացված ղղյակը.

— Հայկական քաղաքաշինության եզակի օրինակներից են Ծրկամրոց, բնական սլաքամաններով թելադրված նավահանգիստ-արվարձան ունեցող Վանալճի շրջապատի քաղաքները:

Քաղաքաշինական նշված առանձնահատկություններն ունեն անմիջական անդրադարձ տարածքի միջնադարյան ճարտարապետությունում: Դրանք, որպես այդպիսին, Տարոն-Վասպուրականի ճարտարապետության միջնադարյան դպրոցի յուրահատուկ ավանդներից էին:

Д. Г. КЕРТМЕНДЖЯН—Градостроительные особенности населенных мест Тарона-Васпуракана в средневековье.—Градостроительные принципы Тарона-Васпуракана были идентичны международным и армянским параллелям. Однако в длительный период исторического развития область приобрела в планировке и застройке местные особенности, основывающейся на древних традициях, в том числе: цитадель в центре застройки города в соответствии с урартскими традициями; в каждом городе области собственный монастырский комплекс, построенный отдельно от цитадели дворец правителя в малых городах по античным традициям; одним из особых градостроительных примеров в Армении (продиктованных условиями местности) является наличие двух цитаделей и предместья при гавани в городах вокруг озера Ван.